ԿԱՐԾԻՔ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ Լալա Գրիգորյանի <<Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները>> վերտառությամբ ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության ինստիտուտի, դրա տեսական և գործնական հիմնախնդիրների վերլուծությունը ունի թե տեսական և թե գործնական կարևոր նշանակություն, քանզի չկա օրենսդրական ամբողջական և սպառիչ կարգավորում, առկա չէ քիչ, թե շատ միասնական կարգավորում արտասահմանյան երկրների օրենսդրություններով, առկա են պրակտիկ հիմնախնդիրներ:

Մասնագիտական գրականության մեջ նույնպես կան հանցագործության միջնորդավորված կատարման ինստիտուտի վերաբերյալ տարբեր մոտեցումներ, թե դրանց դրսևորումների և թե որակման հիմնահարցերի շուրջ: Այս պարագայում հեղինակի կողմից հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հինախնդիրների ուսումնասիրությունը ունի ոչ միայն տեսական, այլև կարևոր նշանակություն իրավակիրառ պրակտիկայում: Ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ հեղինակի կողմից ներկայացվող առաջարկություններն ուղղված են նաև քրեական օրենսդրությամբ մինչ օրս չկարգավորված հարցերին և քրեական օրենսդրության զարգացմանը:

Հարկ է նկատել, որ Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված տեսական աշխատանքներ ՀՀ-ում գրեթե բացակայում են, իսկ կատարված փոքրաթիվ հետազոտությունները ի զորու չեն համալիր կերպով ներկայացնելու նշված հիմնահարցին առնչվող բազամաթիվ խնդիրները, օրենսդրական բացերը, գործնական

բարդությունները: Վերոգրյալը հավաստում է ընտրված թեմայի արդիականությունը և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև նրանում, որ պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը ներկայացնում է մի շարք առաջարկներ, որոնց ներմուծումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ կարող է էապես նպաստել հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը: Պետք է նշել, որ հեղինակի առաջ քաշած շատ գաղափարներ ու դրույթներ լուծում են տալիս մի շարք խնդրահարույց տեսական և գործնական հարցերի և կարող են նպաստել հանցագործությունների որակման գործընթացի առավել դյուրինացմանը, ապահովել իրավական որոշակիության սկզբունքի կենսագործումը:

Հետազոտության առավել արժեքավոր տեսական ու գործնական նշանակություն ունեցող գաղափարներն ու դրույթները, մեր կարծիքով, հանգում են հետևյալին:

Հեղինակի կողմից համակողմանիորեն ուսումնասիրվել և վեր է լուծվել հանցագործության միջնորդավորված կատարման ընդհանուր բնութագիրը, անդրադարձ է կտարվել հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման պատմական զարգացմանն ու կատարելագործման հեռանկարներին: Հեղինակն անդրադարձել է նաև հանցագործության կատարողին հանցակցության ինստիտուտի շրջանակներում, վերլուծել հայոց միջնադարյան իրավական հուշարձաններում դրանց սահմանմանը, տարբերություններին: Անդրադարձ է կատարել ժամանակակից հայ իրավունքին, 20-րդ դարի քրեական օենսդրություններով հանցագործության կատարողի և մյուս հանցակիցների վերաբերյալ սահմաննումներին: Ամփոփելով՝ առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 38-ը՝ կատարողի հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ: Միաժամանակ առաջարկել է ինքնուրույն հոդվածով, հանցակցության ինստիտուտից առանձին, տալ հանցագործության միջնորդված կատարման սահմանումը:

Հեղինակն անդրադարձել է հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությանը, հատկանիշներին և հարաբերակցությանը հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի հետ: Հեղինակն ազմփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա բազմաթիվ տեսակետներ և անելով որոշակի եզրահանգումներ ներկայացրել է կոկնկրետ առաջարկություններ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 63-ի առաջին մասի հինգերորդ

կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ այսպիսով առաջարկելով պատասխանատվությունը և պատիժը խստացնող նոր հանգամանք: Բացի այդ հեղինակն առաջարկել է քր, օր,-ի հոդված 36-ը լրացնել նոր հինգերորդ մասով, այսպիսով առանձին իրավակարգավորում տալով հանցանքի միջնորդավորված կատարողի կամովին հրաժարվելու դեպքերին: Հեղինակն առաջարկում է նաև փոխել քր, օր,- յոթերորդ գլուխը <<Հանցակցության>> փոխարեն վերնագրել՝ <<Հանցագործության մասնակիցների բազմաթվությունը>> և միաժամանակ նախատեսելով առանձին հանցագործության բազմաթվության մյուս ձևեր, սահմանելով հանցագործության միջնորդավորված կատարման սահմանումը:

Հեղինակն վերլուծել է նաև հանցագործության միջնորդավորված կատարման իրավական կարգավորումներին ըստ մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների, կատարել արժեքավոր իրավական համեմատական վերլուծություն, հանգել համապատասխան հետևությունների և արել առաջարկություններ, որոնք ըստ հեղինակի առավել նպատակահարմար են ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործման հեռանկարների տեսանկյունից:

Բացի այդ, հեղինակն առանձին քննարկման առարկա է դարձրել հանցագործության միջնորդավորված կատարման դրսևորումներին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործմանը, ֆիզիկական կամ հգեկան հարկադրանքի ազդեցությամբ գործող անձի կամ հրաման կամ կարգադրություն կատարող անձի օգտագործմանը, առանց մեղքի կամ անզգուշությամբ վնաս պատճառող անփի օգտագործմանը, ինչպես նաև ներկայացրել է դատական պրակտիկայի կոնկրետ դեպքեր: Վերջինիս արդյունքներով՝ հեղինակն արել է համապատասխան եզրահանգումներ, մասնավորապես՝ եթե անձը գիտակցում է, որ հանցանքի կատարման համար օգտագործում է այնպիսի անձի, ով թեև հասել է օրենքով նախատեսված որոշակի տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցելու իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարելու դա, ապա առկա է հանցանքի միջնորդավորված կատարում կամ եթե անձը ներգործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի կամքի և գիտակցության վրա, որպեսզի վերջինս վնաս պատճառի սեփական իրավունքներին ու օրինական

շահերին, ապա առկա է հանցանքի միջնորդավորված կատարում: Հեղինակը նաև ներկայացրել է իր տեսակետը, թե որ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է առկա անհաղթահարելի կամ անհաղթահարելի ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի գործադրմամբ, օնչպես նաև առանց մեղքի վնաս պատճառող անձի օգտագործմամբ հանցանքի միջնորդավորված կատարումը: Վերջում հեղինակը եզրահանգում է նաև, որ հանցանքի միջնորդավորված կատարողի կողմից օգտագործված անձը ենթակա է քրեական պատասծանատվության միայն այն դեպքում, երբ որպես <<գործիք>> օգտագործված անձը վնասը պատճառել է անզգուշությամբ և քր, օր,-ի հատուկ մասում տվյալ արարքն անզգուշությամբ կատարելը նախատեսված է որպես հանցագործություն:

Հեղինակն աշխատության մեջ անդրադարձել է նաև հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնահարցերին, մասնավորապես փաստական սխալի դեպքում, ինչպես նաև վեր է լուծել չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազատման որակման առանձնահատկություններին: Այստեղ պետք է արժանին մատուցել հեղինակին այն առումով, որ քննարկման առարկա դարձած հարցերն իսկապես ունեն իրավակիրառ կարևոր նշանակություն: Ամփոփելով՝ հեղինակն արել է համապատասխան եզրահանգումներ, մասնավորապես հանցանքի միջնորդավորված կատարմանն առնչվող փաստական սխալին քրեաիարավական գնահատական տալիս, ըստ հեղինակի, անհրաժեշտ է արարքը որակել հանցափորձ, երբ անձը կարծել է, թե հանցանքը կատարում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, ով ենթական չէ քրեական պատասխանատվության, սակայն իրականում ենթակա է քրեական պատասխանատվության, ինչպես նաև այն դեպքում, եթե անձը կարշել է, թե հանցագործության է դրդում քքրեական պատասխանատվության ենթակա անձի, սակայն իրականում վերջինս օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Միաժամանակ հեղինակը տվել է չավարտված միջնորդավորված կատարման, միջնորդավորված կատարման սահմանազանցման որակման հարցերի ուսումնասիրությամբ իր եզրահանգումները, որոնք նույնպես կարող են ունենալ գիտական և իրավակիրառ նշանակություն:

Հարկ է նշել, որ հեղինակին հաջողվել է բովանդակալից և հետաքրքիր աշխատանք ներկայացնել: Ներկայացված աշխատանքի շրջանակներում արվել են

բազմաթիվ առաջարկություններ, արտահայտվել տեսակետներ գիտական վիճաբանությունների առարկա հանդիսացող հիմնախնդիրների վերաբերյալ: Հեղինակը լայնորեն կիրառել է ՀՀ դատական պրակտիկայի, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նյութերը, ինչը արժեքավորում է կատարված աշխատանքը:

Պետք է նշել, որ ատենախոսության հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով խոր և համալիր հետազոտություն իրականացնել: Դրան նպաստել է հատկապես այն հանգամանքը, որ նա լայնորեն օգտվել է դատական պրակտիկայի նյութերից, վիճակագրական ծավալուն տվյալներից, խոր վերլուծության է ենթարկել այլ երկրների օրենսդրական փորձը, միջազգային փաստաթղթերը, քննադատական վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներն ու դրանց կիրառման պրակտիկան: Դա թույլ է տվել հեղինակին բացահայտելու ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերն ու թերությունները և հետաքրքիր առաջարկություններ ներկայացնելու՝ ուղղված քննարկվող իրավանորմերի օրենսդրական կատարելագործմանը և լրամշակմանը:

Ատենախոսության անվիճելի արժանիքներից է այն, որ կատարված հետազոտությունների հիման վրա հեղինակի ներկայացրած առաջարկությունները հիմնավոր են և կարող են էապես նպաստել իրավակիրառ պրակտիկայի ու ՀՀ քրեական օրենսգրքի կատարելագործմանը:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով կատարված աշխատանքը, կցանկանայինք որոշ նկատառումներ արտահայտել դրա կապակցությամբ, որոնք հանգում են հետևյալին:

1. Հեղինակն առաջարկում է՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 63-ում որպես պատասխանատվությունն ու պատիժը խստացնող հանգամանք նախատեսել հանցանքն այնպիսի անձանց օգտագործելու միջոցով կատարելը, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության **կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ:** Որպես հիմանավորում հեղինակը նշում է, որ հանցագործության միջնորդավորված կատարողը դրսևորում է բարոյապես պարսավելի վարքագիծ, քանի որ իր հանցավոր նպատակն իրագործում է մարդուն <<կենդանի գործիք>> դարձնելով: Հեղինակը, ինչ

խոսք, ճիշտ է բնութագրում միջնորդավորված կատարողի վարքագիծը, բայց արդյոք դա բավարար է, որպեսզի վերը նշված հանգամանքը օրենսդրորեն դիտարկել պատասխանատվությունն ու պատիժը խստացնող հանգամանք: Թերևս վիճելի է, քանզի քր. օր. հոդված 61-ում, պատժի տեսակը և չափը որոշելիս հաշվի է առնվում նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները: Խնդիրը կարող է կարգավորվել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

2. Հեղինակը գտնում է, որ՝ <<Հանցանքի միջնորդավորված կատարումը դրսևորվում է հանցանքն այնպիսի անձանց օգտագործելու միջոցով կատարելով, ովքեր .... քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս են պատճառել ..... անզգուշությամբ>>: Անշուշտ աշխատանքն էլ ավելի կհարստանար, եթե հեղինակը քննարկման առարկա դարձներ, թե ինչքանով է հիմնավորված հանցանքի միջնորդավորված կատարում համարել անզգույշ մեղքի երկու տեսակներից՝ հանցավոր ինքնավստահություն և հանցավոր անփութություն, յուրաքանչյուրով պատճառված վնասը: Վերլուծելով ինքնավստահության և անփութության գիտակցական և կամային չափանիշները՝ կարելի էր հանգել այլ եզրահանգման:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները ամենևին չեն նսեմացնում աշխատանքի արժանիքները, մասնակի բնույթ են կրում, պայմանավորված են աշխատանքն էլ ավելի լիարժեք և ամփոփ տեսնելու ցանկությամբ, իսկ որոշ դեպքերում մեր անձնական կարծիքն են ներկայացնում և չեն կարող էապես ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա: Ատենախոսական հետազոտության արդյունքների հավաստիությունը կասկած չի հարուցում: Ատենախոսությունը կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի հարուստ էմպիրիկ և աղբյուրագիտական հիմք:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հավաստել, որ <<Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը

լիովին բավարարում է և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 7-րդ կետի պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Լալա Գրիգորյանիը արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ:

Գրախոսող

«Արցախբանկ» ՓԲԸ խորհրդի անդամ, ի.գ.թ. Ա.Օսիկյան

Ա.Օսիկյանի ստորագրությունը հաստատում եմ:

«Արցախբանկ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն-Վարչության նախագահ Ա.Բալայան